**Արձանագրություն N 1**

**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43» ծածկագրով Նոր Հաճընի համայնքապետարանի կարիքների համար ապրանքների ձեռքբերման էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու մասին նիստի**

Նոր Հաճըն համայնք 31 հուլիսի 2026թ.

ժամը՝ 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

**Նախագահ՝**

Արման Սմբատյան - Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

**անդամներ**

Գոհարիկ Կարապետյան՝ Նոր Հաճընի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ

Նազիկ Մնացականյան՝ Նոր Հաճընի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ:

**Գնումները համակարգող՝** Տաթևիկ Հովհաննիսյան - Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

**Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

---

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. հաստատել հրավերի տեքստը.
2. հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը :

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատելու մասին**

---

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետի և 31-րդ կետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում որոշեց

Հաստատել **ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43** ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի տեքստը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3 , դեմ՝ 0:

*Հավելված N 19*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 09 -ի*
*N 427-Ա հրամանի*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 31 թիվ 1 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43

Պատվիրատուն՝ Նոր Հաճընի համայնքապետարանը, որը գտնվում է Տոռոզյան 7 հասցեում, հայտարարում է էլեկտրոնային աճուրդ, որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10 -րդ օրվա ժամը 15:00ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրը ժամը 15:00-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար ՝Տաթևիկ Հովհաննիսյանին

Հեռախոս **0224 4 2550**

Էլ. փոստ gnumnernorhachn@gmail.com

Պատվիրատու՝ Նոր Հաճընի համայնքապետարան

*Հաստատված է*
*ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*
*2026թ. Հուլիսի 31-ի N 1 որոշմամբ*

*ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

Հ Ր Ա Վ Ե Ր

ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ

*Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

*Եթե Դուք գրանցված չեք էլեկտրոնային գնումների համակարգում, սակայն ցանկություն ունեք մասնակցել սույն ընթացակարգին, ապա հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ինքնագրանցվել Armeps համակարգում (www.armeps.am): Համակարգում գրանցվելու պայմանները սահմանված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցում:*

*Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝* http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/*:*

*Միաժամանակ՝*

*- հայտը էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Օրենսդրություն»» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկով.:*

*Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝ http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/.*

*- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս կարող եք դիմել պատվիրատուին, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ լիազորված մարմին)՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով (հեռախոս՝(+37411) 800-600 (112) ):*

*Համակարգում գրանցվելը, ինչպես նաև հայտ ներկայացնելն անվճար է:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
## ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՎԵՐԻ

### ՄԱՍ I.


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում որակավորման ապահովում ներկայացնելու պայմանները
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7.[1]
8. Աճուրդի անցկացման պայմանները, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Որակավորման և պայմանագրի ապահովումները
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


### ՄԱՍ II. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Հավելվածներ 1-5


---

*[1] Կետը, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 7-րդ բաժինը հրավերից հանվում է, եթե՝*
*- ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա*
*- գնման հայտով փվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չիգերազանցում 25 մլն. ՀՀ դրամը.*
*Սույն պայմանի կիրառման դեպքում խմբագրվում են հրավերի կետերը, բաժինները և դրանց կապարված հղումները:*

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով անցկացվող էլեկտրոնային աճուրդ (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Աճուրդի կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել ինչպես էլեկտրոնային գնումների ARMEPS, այնպես էլ eauction.armeps.am համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ համակարգ) որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում eauction.armeps.am հասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Համակարգում մասնակցի գրանցման գործընթացը նկարագրված է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկում:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnernorhachn@gmail.com

ՄԱՍ I

# 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ ապրանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են 11 չափաբաժնում՝

| *Չափաբաժինների* | | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|---|
| *համարները* | *գնման գինը* | |
| 1 | 100000 | Լազերային գունավոր տպիչ |
| 2 | 240000 | Անխափան սնուցման սարք |
| 3 | 300000 | Համակարգիչ |
| 4 | 250000 | Դյուրակիր համակարգիչ |
| 5 | 80000 | Համակարգչի էկրան (մոնիտոր) |
| 6 | 95000 | Գրասեղան |
| 7 | 75000 | Քաշովի դարակներ |
| 8 | 75000 | Քաշովի դարակներ |
| 9 | 75000 | Քաշովի դարակներ |
| 10 | 120000 | պահարան |
| 11 | 160000 | Օդորակիչ |

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

# 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ, ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված է.

4)որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

7) որոնք ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության հիման վրա՝ գնման գործընթացներին չմասնակցելու պարտավորագրերի հիմքով, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են նույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման,

Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև ցուցակ), եթե՝

- խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման

գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը.

- որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3 Մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ինչպես նաև ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակներում ներառվելը , դրանցում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում են վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին), բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է որակավորման ապահովում՝ սույն հրավերով սահմանված կարգով և չափով:

Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:

2.5 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.6 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից կամ եթե հարցումը վերաբերում է մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Ընդ որում, մասնակիցը համակարգի միջոցով ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում:

3.5 Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

3.6 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում, եթե սույն հրավերով սահմանված է հայտի ապահովում ներկայացնելու պահանջ:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Սույն ընթացակարգը մեկից ավել չափաբաժիններով կազմակերպված լինելու դեպքում մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

4.2 Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «10»րդ օրվա ժամը 15:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերովսահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով սահմանված՝ վարկունակության վարկանիշ ունենալու մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզեդենտ չհանդիսացող մասնակիցը,

-1.3 հավելվածը ներկայացնում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում:Եթե մասնակիցը հայտարարվում է ըտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) գնային առաջարկ, որը ներկայացվում է համակարգի միջոցով: Գնային առաջարկի ներկայացման կարգը և պայմանները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 5-րդ և 2-րդ մասի 2-րդ բաժնով.

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:[2]

4) [3]

5) գործակալության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից.

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

- համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.
- եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:

[2] *Եթե սույն հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի անվանման և վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա ենթակետից հանվում են «ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը » և «Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, եթե չի կիրառվում սույն մասի 1.1 կետի վերջին նախադասությամբ սահմանված պայմանը » բառերը,*

[3] *Ենթակետը հանվում է, եթե հայտի ապահովման պահանջ սահմանված չէ:*

Հայտում ներառված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին և հայտեր ներկայացրած մասնակիցներին հասանելի է դառնում բացառապես աճուրդի արդյունքներն ամփոփելուց հետո՝ ավտոմատ եղանակով:

## 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

5.1 Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը ավտոմատ արտացոլում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում հարկի գումարի ավտոմատ հաշվարկման նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող իրավերով սահմանափակվել:

ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները գնային առաջարկները կարող են ներկայացնել ԱՄՆ դոլլարով, եվրոյով և ռուսական ռուբլիով, որոնք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով, դոլար՝ 366,2 դրամ, ռուսական ռուբլի՝ 4,60դրամ, եվրո՝ 421,13դրամ փոխարժեքով:

## 6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

## 7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

## 8. ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերով սահմանված՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի բոլոր անդամներին միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը՝ առանց ավելացված արժեքի հարկի գումարի, ըստ չափաբաժինների էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը և ժամը, ինչպես նաև օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալները: Եթե սույն ընթացակարգը բողոքարկվել է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը և առկա չէ ընթացակարգի կասեցումը հանելու մասին դատարանի որոշում, ապա սույն կետով նախատեսված տեղեկատվությունը համակարգը մասնակիցներին ուղարկում է բողոքի վերաբերյալ կայացված որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Ընդ որում անկախ ընթացակարգը կասեցված լինելու հանգամանքից, մասնակիցներն ունեն մինչև սույն հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը հայտեր ներկայացնելու, ներկայացված հայտերը փոխելու կամ հետ վերցնելու հնարավորություն:

8.2 Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ օգոստոսի 14 2026թ. ժամը «15:00»-ին: Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

8.3 Գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների

դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

8.4 Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով: Այն մասնակիցները, որոնք տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարեն ավելացված արժեքի հարկ, նվազեցվող գները ներկայացնում են առանց այդ հարկի գումարի հաշվարկման: Եթե տվյալ չափաբաժնի գծով աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե) որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

8.5 Մինչև աճուրդի ամփոփման համար սույն հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

8.6 Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելուց անմիջապես հետո համակարգի հրապարակային էջի "Հայտեր բաժնում" ավտոմատ եղանակով հրապարակվում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, աճուրդի արդյունքում ըստ չափաբաժինների որոշված ինչպես առաջին տեղը զբաղեցրած, այնպես էլ մյուս մասնակիցների անվանումներն ու վերջիններիս կողմից ինչպես հայտով, այնպես էլ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ ներկայացված գներն ու հայտով ներկայացված փաստաթղթերը: Համակարգը սույն կետով նախատեսված տեղեկատվությունը միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հայտեր ներկայացրած մասնակիցներին:

8.7 Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

8.8 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքումպարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը սույնընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա, սույն ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը անհապաղ ինքնաբացարկ է հայտնում սուն ընթացակարգից:

8.9 Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝

1) գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը.

2) մերժվում են մյուս մասնակիցների հայտերը:

Եթե աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստը սկսելու օրվանից հաշված տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում:

8.10 Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից:

8.11 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և /կամ/ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված անձը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ / կատարող /, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.12 Այն դեպքում, երբ մինչև պայմանագիրը պատվիրատուի կողմից կնքվելը պարզվում է, որ մասնակիցը ներառված է ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ապա մասնակցի հայտը մերժվում է:

8.13 Գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքներով կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները և քարտուղարը:

8.14 Հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովի նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ.

2) իր և գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:Ընդ որում.

- եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը  ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական  չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները՝ այդ թվում՝ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված անձը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ /կատարող/,  կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում,

-սույն հրավերի  1-ին մասի 8.12- րդ կետով նախատեսված հանգամանքը չի համարվում գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

8.16 Եթե մասնակիցն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

8.17 Սույն հրավերի 1-ին մասի 8.11  կետում նշված փաստաթղթերը առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացնում է համակարգի միջոցով: Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը համակարգը ավտոմատ եղանակող միաժամանակ ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին և քարտուղարին:

8.18 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել  հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8.19 Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ,  որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Այն դեպքում երբ, մասնակիցը ներկայացնում է իր կողմից չհաստատվող տեղեկություն, ապա փաստաթղթերն ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող  փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

8.20 Սույն ընթացակարգը մեկից ավել չափաբաժիններով կազմակերպված լինելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

8.21 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում գնման ընթացակարգը հանձնաժողովի որոշմամբ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.22 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով հայտով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե առաջինը տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.23 Սույն հրավերի 1-ին մասի 8.22 կետի կիրառման նպատակով կարող է հրավիրվել հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.24 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

8.25 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 10 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի.

- չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր,

- է նաև այն դեպքում, երբ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, և այն մերժվել է: Սույն կետի կիրառման դեպքում անգործության ժամկետը սահմանվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

8.26 Բոլոր այն դեպքերում, երբ սույն ընթացակարգի շրջանակում լիազորված մարմնի առաջարկությամբ որևէ գործողություն կարող է իրականացվել թղթային եղանակով, ապա պատվիրատուի և մասնակցի միջև այդ գործողությանը վերաբերող տեղեկատվության փոխանակումը (ծանուցումներն)իրականացվում են սույն հրավերում և մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստերի հասցեների միջոցով՝ պահպանելով այդ գործողությունների համար սույն հրավերով սահմանված ժամկետները:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին է ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով՝ համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ ծանուցմամբ սահմանված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

9.4 Եթե ընտրված մասնակիցը՝

1) ՀՀ ռեզիդենտ է, ապա պայմանագրի նախագիծը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, իսկ որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովման բնօրինակները ներկայացնում է պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ.

2) ՀՀ ռեզիդենտ չէ, ապա իր կողմից հաստատված՝ ստորագրված, իսկ կնիքի առկայության դեպքում նաև կնքված պայմանագրի և որակավորման ու պայմանագրի (կանխավճարի) ապահովման բնօրինակները ներկայացնում է պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ:

9.5 Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ընտրված մասնակիցը՝

1) ՀՀ ռեզիդենտ է, ապա պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագիրը հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Պայմանագիրը հաստատվելու օրը քարտուղարը այն ներբեռնում է համակարգ, որը նույն պահին ավտոմատ եղանակով պայմանագիրն ուղարկում է ընտրված մասնակցին.

2) ՀՀ ռեզիդենտ չէ, ապա պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագիրը ստորագրվում և կնքվում է: Նույն օրը քարտուղարը պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը ներբեռնում է համակարգ, որը նույն պահին ավտոմատ եղանակով պայմանագիրն ուղարկում է ընտրված մասնակցին: Միաժամանակ քարտուղարն ուղեկցող գրությամբ պայմանագրի բնօրինակը ուղարկում է ընտրված մասնակցին:

9.6 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, կանխավճարի չափի կամընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.7 Պայմանագիրը կնքման օր է համարվում պատվիրատուի ղեկավարի կողմից այն հաստատվելու օրը: Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 10. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները:[4]

10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի 15 տոկոսին: Որակավորման ապահովումը ներկայացվում է տուժանքի (հավելված 3.2) կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ[5]:

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ որակավորման ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ որակավորման ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջները: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

:[6]

:[7]

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

---

[4] ա) *10.1 կետում բանկային երաշխիքի ձևով ներկայացվող ապահովումների դեպքում ժամկետը լրացվում է հրավերի հաստատման փուլում՝ մինչև հրապարակումը և չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրվանից,*

բ) *10.1 կետից հանվում է << Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է «» աշխատանքային օր:>> նախադասությունը՝*

*-եթե.գնման հայտով տվյալ չափաբաժնի գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և նախատեսված չէ կանխավճար*

*- ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ընթացակարգը կազմակերպելու համար անհրաժեշտ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվելու են ֆինանսական միջոցներ,*

[5] *Եթե գնման հայտով տվյալ չափաբաժնի գնման գինը.*

*- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը,ապա սույն պարբերությունից հանվում են << կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների >> բառերը,:*

*- չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, բայց ավելի է քսանհինգապատիկից, ապա սույն պարբերությունից հանվում են << տուժանքի (հավելված 3.2) կամ >> բառերը, իսկ <<20>> թիվը փոխարինվում է <<90>> թվով,*

*- գերազանցում է գնումների բազային միավորիյութսունապատիկը, ապա սույն պարբերությունից հանվում է << տուժանքի (հավելված 3.2) կամ >> բառերը, <<15>> թիվը փոխարինվում է <<30>> թվով, իսկ <<20>> թիվը՝ <<90>> թվով,*

[6] *Եթե -գնման գործընթացը չի կազմակերպվում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, ապա սույն հրավերի 10.2 կետից հանվում է « Ընդ որում, եթե ապրանքների գնման պայմանագրերը կնքվում են Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առկա ֆինանսական հատկացումների շրջանակում տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի (համաձայնագրերի) մասով ներկայացված որակավորման ապահովումը ենթակա է վերադարձման այդ համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարողի կողմից ողջ ծավալով պատշաճ կատարվելու և դրա արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու դեպքում, եթե պայմանագրի (համաձայնագրի) կատարումը փուլային չէ» նախադասությունը:*

[7] *Եթե՝*

*- տվյալ ընթացակարգի շրջանակում չի կիրառվում 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա տվյալ պարբերությունը հանվում է հրավերից, իսկ 6-րդ պարբերությունից հանվում է "կամ հավելված 3.1" բառերը.*

*- տվյալ ընթացակարգի շրջանակում կիրառվում է 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա 4-րդ և 6-րդ պարբերությունների փոխարեն սահմանվում է հետևյալ պայմանը՝ "Պայմանագրի կատարման յուրաքանչյուր փուլի արդյունքն ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ :Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է 3.1 հավելվածի համաձայն: " , իսկ հավելված 3-ը հրավերից հանվում է:*

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է *միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.1) կամ կանխիկ փողի ձևով:*[8]

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում էներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին.

10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝ նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն. ՀՀ դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

10.5 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով (հավելված՝ 4.2):

10.6 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

10.7 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ներկայացնում է գրավոր՝ ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը գրավոր ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

10.8 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և/կամ որակավորման ապահովման վերադարձման մասին գրավոր տեղեկացնում է՝

- կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում կցելով վճարումը հիմնավորող հայտով ներկայացված փաստաթղթի պատճենը.
- բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ երաշխիքը թողարկած բանկին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում.
-տուժանքի ձևով ներկայացված ապահովման դեպքում դեպքում՝ այն ներկայացրած մասնակցին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

---

[8] *Եթե գնման հայտով գնվելիք ապրանքիգինը չի գերազանցում 25 մլն. ՀՀ դրամը, ապա "բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով" բառերը փոխարիկվում են "միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.1) կամ կանխիկ փողի ձևով" բառերով իսկ 3-րդ պարբերության մեջ նշված <<90>> թիվը փոխարինվում է <<20 >> թվով:*

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համայնքի ավագանու որոշման հիման վրա:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Սույն ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման և/կամ տվյալ չափաբաժնի գծով աճուրդի իրականացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը կամ իրավերի պահանջները:

12.2. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3. Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

12.4. Սույն իրավերով սահմանված անգործության ժամկետը պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հայցային վաղեմության ժամկետ է, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման և պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված վեճերի, որոնց դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեսուն օրացուցային օր է:

12.5.Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

12.6. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.7. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

12.8. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն կետով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

12.9. Դատարանը սույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն բաժնով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

12.10. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն կետով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

12.11. Հայցադիմումի պատասխանը պատվիրատուն ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

12.12 Գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր

Օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

12.13. Դատարանը սույն բաժնով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

12.14. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

12.15. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.16. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

12.17. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

12.18. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

12.19 . Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն հրավերի 12.10 կետով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

12.20. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն կետով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.21. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

12.22. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.23. Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով:

**ՄԱՍ II**
**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԸ**

**ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒԴԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:
1.2 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտում ներառվող փաստաթղթերին և դրան հաստատմանը ներկայացվող պահանջները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնով:

Դիմում-հայտարարության (հավելված 1), ձևաթուղթը մասնակիցը ներբեռնում է համակարգից, իսկ սույն հրավերով նախատեսված դեպքում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը մասնակիցը մուտքագրում է (լրացնում է) համակարգում:

ՀՀ ռեզիդենտ՝

- հանդիսացող մասնակիցը դիմում-հայտարարությունը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Հայտում ներառվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում չեն կնքվում.

- չհանդիսացող մասնակիցը ստորագրում, իսկ կնիքի առկայության դեպքում նաև կնքում է դիմում հայտարարությունը, որի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը ներբեռնում է համակարգ:

2.2 Մասնակիցը գնային առաջարկը նշում է ըստ չափաբաժինների: Գումարը նշվում է միայն թվերով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը հաշվարկում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Այդ նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Համակարգն ավտոմատ եղանակով գնային առաջարկում նշված թվերը ցույց է տալիս նաև տառերով: Վերջնական ձևավորված գնային առաջարկը՝ արտահայտված տառերով և թվերով, համակարգը ավտոմատ եղանակով ներկայացնում է մասնակցի հաստատմանը: Ընդ որում գնային առաջարկը մասնակիցը կարող է լրացնել և հաստատել միայն իր կողմից հաստատված դիմում-հայտարարությունը համակարգ ներբեռնելուց հետո սույն ընթացակարգի համար ստացված եզակի ծածկագիրը (PIN-կոդ) համակարգից ստանալուց հետո: Հայտը համարվում է համակարգի կողմից ընդունված, եթե մասնակիցը հաստատում է գնային առաջարկը:

Սույն ընթացակարգում հետագա գործողությունները, ներառյալ աճուրդի ընթացքում նվազեցվող գնային առաջարկների ներկայացումը, մասնակիցը կարող է իրականացնել բացառապես սույն կետում նշված եզակի ծածկագիրը (PIN-կոդը) օգտագործելու միջոցով: Ընդ որում եզակի ծածկագիրը (PIN-կոդը) մասնակցի գրանցահաշվում (համակարգում մասնակցի անձնական տիրույթ, պրոֆիլ) երևում է մեկ անգամ, որը ավտոմատ ուղարկվում է նաև համակարգում մասնակցի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին: Մասնակիցը պատասխանատու է ծածկագրի անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝ այդ ծածկագրով համակարգում ցանկացած գործողություն իրականացնելու համար: Ծածկագիրը (PIN-կոդը) համակարգը տրամադրում է միայն մեկ անգամ և ենթակա չէ վերականգնման:

2.3 Մինչև հայտերի բացման վերջնաժամկետի լրանալը մասնակիցը կարող է համակարգի միջոցով չեղարկել իր հայտը և ուղարկել նոր հայտ, կամ հրաժարվել ընթացակարգին մասնակցելուց: Սույն կետի համաձայն ուղարկված նոր հայտի դեպքում համակարգը մասնակցին տրամադրում է նոր եզակի ծածկագիր (PIN-կոդ):

2.4 Աճուրդի փուլում մասնակիցը նվազեցվող գնային առաջարկները ներկայացնում է սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով սահմանված կարգով՝ առանց համակարգ նոր փաստաթղթեր ներբեռնելու հանգամանքի:

**Հավելված N 1**
**ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***
**Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու**

______________________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

____________________________________-ի կողմից ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) _____________ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

______________________________________-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

__________________________________________ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____________________-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ____________________________
հարկի վճարողի հաշվառման համարը
- բանկային հաշվեհամարն է՝ ______________________________________
բանկային հաշվեհամարը
- գործունեության հասցեն է՝ ________________________________
գործունեության հասցեն
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ __________________________________
էլ. փոստի հասցեն

- հեռախոսահամարն է՝ __________________________________________
հեռախոսի համարը
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ _____________________________________________________
ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

Սույնով ___________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) ____________________________________________-ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանում

բավարարում են ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և __________________________________________________-ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանում

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում [9]

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

[9] *Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են << կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով:Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:*

- բացակայում է հրավերով սահմանված՝ ________________________________________-ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) ____________________________________________________________-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ______________________________________________-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

________________________________________________ կողմից առաջարկվող
մասնակցի անվանումը

ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ներկայացվում է համակարգի միջոցով:

______________________________________________ ______________________
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:

**Հավելված N 1.2****
**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՁԵՎ**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

**1. Կազմակերպությունը**

*1.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 1.1.1. Անվանումը | |
| 1.1.2. Անվանումը լատինատառ | |
| 1.1.3. Պետական գրանցման համարը | |
| 1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 1.1.5. Գրանցման հասցեն | |
| 1.1.6. Գրանցման պետությունը | |
| 1.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը*

| | |
|---|---|
| 1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը | |
| 1.2.2. Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը | |

*1.3. Հայտարարագրի ներկայացումը*

| | |
|---|---|
| 1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին | |
| 1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը | |
| 1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը | |

## 2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

*2.1. Բաժնեփոմսերի ցուցակման փվյալները*

| | |
|---|---|
| 2.1.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 2.1.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

*2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի փվյալները*

| | |
|---|---|
| 2.2.1. Անվանումը | |
| 2.2.2. Անվանումը լատինատառ | |
| 2.2.3. Պետական գրանցման համարը | |
| 2.2.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 2.2.5. Գրանցման հասցեն | |
| 2.2.6. Գրանցման պետությունը | |
| 2.2.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*2.3. Վերահսկողության մակարդակը*

| | |
|---|---|
| 2.3.1. Մասնակցության չափը (%) | |
| 2.3.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

## 3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

*3.1. Պեփության կամ համայնքի մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.1.1. Պետության անվանումը | |
| 3.1.2. Համայնքի անվանումը | |
| 3.1.3. Մասնակցության չափը (%) | |

| | |
|---|---|
| 3.1.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

*3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.2.1. Միջազգային կազմակերպության անվանումը | |
| 3.2.2. Միջազգային կազմակերպության անվանումը լատինատառ | |
| 3.2.3. Մասնակցության չափը (%) | |
| 3.2.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

**4. Իրական շահառուի տվյալները**

*4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները*

| | |
|---|---|
| 4.1.1. Անունը | |
| 4.1.2. Ազգանունը | |
| 4.1.3. Անունը (լատինատառ) | |
| 4.1.4. Ազգանունը (լատինատառ) | |
| 4.1.5. Քաղաքացիությունը | |
| 4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին | |

*4.2. Անձը հաստատող փաստաթուղթը*

| | |
|---|---|
| 4.2.1. Փաստաթղթի տեսակը | |
| 4.2.2. Փաստաթղթի համարը | |
| 4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին | |
| 4.2.4. Տրամադրող մարմինը | |

| | |
|---|---|
| 4.2.5. ՀԾՀ կամ համարժեք համարը | |

*4.3. Անձի հաշվառման հասցեն*

| | |
|---|---|
| 4.3.1. Պետությունը | |
| 4.3.2. Համայնքը | |
| 4.3.3. Վարչատարածքային միավորը | |
| 4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | |

*4.4. Անձի բնակության հասցեն*

| | |
|---|---|
| 4.4.1. Պետությունը | |
| 4.4.2. Համայնքը | |
| 4.4.3. Վարչատարածքային միավորը | |
| 4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | |

*4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)*

| | |
|---|---|
| ☐ ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում | |
| 4.5.1. Մասնակցության չափը (%) | |
| 4.5.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |
| ☐ բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով | |
| ☐ գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ | |

*4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)*

| |
|---|
| ☐ ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում |

| | |
|---|---|
| 4.6.1. Մասնակցության չափը (%) | |
| 4.6.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

| |
|---|
| ☐ բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը |
| ☐ գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ |
| ☐ դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով |
| ☐ ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ |

*4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները*

| | |
|---|---|
| 4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին | |
| 4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը | ☐ Առանձին<br>☐ Փոխկապակցված անձանց հետ համատեղ |
| 4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ | ☐ Այո<br>☐ Ոչ |

*4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները*

| | |
|---|---|
| 4.8.1. Էլ. փոստի հասցեն | |

| | |
|---|---|
| 4.8.2. Հեռախոսահամարը | |

**5. Միջանկյալ իրավաբանական անձինք**

*5.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 5.1.1. Անվանումը | |
| 5.1.2. Անվանումը լատինատառ | |
| 5.1.3. Պետական գրանցման համարը | |
| 5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 5.1.5. Գրանցման հասցեն | |
| 5.1.6. Գրանցման պետությունը | |
| 5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*5.2. Իրական շահառուի տվյալները*

| | |
|---|---|
| 5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ | |
| | |
| | |
| | |
| | |

*5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնեփոմսերի ցուցակման տվյալները*

| | |
|---|---|
| 5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

**6. Լրացուցիչ նշումներ**

| *Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին* |
| --- |
| |

## I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.

3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում: Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար: Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.

2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի: Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.

3) «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը

վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները: Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում: Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարարագրում լրացվում է դրանց տառադարձությունը.

2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.

3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.

4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից: Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.

5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ. Այս ենթաբաժնի «**դ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե. Այս ենթաբաժնի «**ե**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր

միջանկյալ իրավաբանական անձանց քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ: Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման:

3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման: Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում: Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Լրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին: Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարազաբանումներ հայտարարագրի առնչությամբ:

7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը: Հայտարարագրի էջերի համարակալումը և հայտարարագրում էջերի քանակի մասին նշում կատարելը պարտադիր չէ:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** 1.2 հավելվածը չի ներկայացվում այն մասնակցի կողմից, ով .*
*- հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ (այդ մասնակիցը ներկայացնում է հավելված 1,3-ը)*
*-ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր*

**Հավելված N 1.3****
**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՁԵՎ**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է ____________________________-ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ -----------------------------------------------------***

______________________________________________ ______________________
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** 1,3 հավելվածը.*
*-ներկայացվում է ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից*
*-չի ներկայացվում այն մասնակցի կողմից, ով ֆիզիկական անձ է կամ անհատ ձեռնարկատեր*
**** լրացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:*

**Հավելված 3.2**
**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43» ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «_____»__________________ 20 թ.

______________________, ի դեմս Ընկերության տնօրեն __________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Նոր Հաճընի Համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

_______________________________________________

ընկերության անվանումը

_______________________________________________

ընկերության հասցեն

_______________________________________________

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

_______________________________________________

ընկերության բանկային հաշվեհամարը

_______________________________________________

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

_______________________________________________

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝

6. Վճարողի հաշվի համարը՝

7. Վճարողի ՀՎՀՀ՝

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Նոր Հաճընի համայնքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 03560702

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900115102056

14.Գումարը (թվերով և բառերով)՝

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ |

| | |
|---|---|
| 24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

* *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայման ները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված) | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Փաստաթղթի անվանումը | պարտադիր | պարտադիր | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր> |
| 2. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 3. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: |
| 4. | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 9. | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>(գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում) | (չի լրացվում) |
| 11. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) | պարտադիր | ոչ պարտադիր<br>(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում) | (չի լրացվում եւ չի կիրառվում) |
| 16. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 17. | գործարքի նպատակը | պարտադիր | Պարտադիր լրացվում է «որակավորման ապահովման համար» բառերը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 18. | Վճարման կատարման հիմքերը՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի, | |
| 19. | Վճարման պայմանները՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը,<br>որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար | նախապես լրացվում է շահառուի կողմից |
| 20. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին)<br>Եթ և լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է: | լրացվում է շահառուի կողմից |
| 21.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը: | ստորագրվում է վճարողի կողմից կամ<br>դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը |
| 21.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով | կնքվում է վճարողի կողմից<br>թղթային եղանակով ներկայացնելիս |
| 22.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | Պարտադիր՝<br>լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 22.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից<br>թղթային եղանակով բանկ ներկայացնելիս |
| 23.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.գ | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր<br>վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |
| 24.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |

**Հավելված 4.1**
**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43» ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի ապահովում)**

ք. Երևան «______»____________________ 20 թ.

_______________________, ի դեմս Ընկերության տնօրեն __________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Նոր Հաճընի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից

կազմակերպված ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

________________________________________

ընկերության անվանումը

________________________________________

ընկերության հասցեն

________________________________________

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

________________________________________

ընկերության բանկային հաշվեհամարը

________________________________________

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

________________________________________

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Նոր Հաճընի համայնքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 03560702 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900115102056 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ | |
| 19. Վճարման պայմանները՝ | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ |

| | |
|---|---|
| 24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված) | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված) |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 1. | Փաստաթղթի անվանումը | պարտադիր | պարտադիր | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր> |
| 2. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 3. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: |
| 4. | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 9. | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>(գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում) | (չի լրացվում) |
| 11. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) | պարտադիր | ոչ պարտադիր<br>(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում) | (չի լրացվում եւ չի կիրառվում) |
| 16. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 17. | գործարքի նպատակը | պարտադիր | Պարտադիր լրացվում է «պայմանագրի կատարման ապահովման համար» բառերը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 18. | Վճարման կատարման հիմքերը՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի, | |
| 19. | Վճարման պայմանները՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը, որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար | նախապես լրացվում է շահառուի կողմից |
| 20. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին)<br>Եթ ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է: | լրացվում է շահառուի կողմից |
| 21.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը: | ստորագրվում է վճարողի կողմից կամ դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը |
| 21.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով | կնքվում է վճարողի կողմից թղթային եղանակով ներկայացնելիս |
| 22.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | Պարտադիր՝<br>լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 22.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից թղթային եղանակով բանկ ներկայացնելիս |
| 23.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.գ | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |
| 24.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |

**Հավելված 5**
**«ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43»* ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ______________________**

ք. ______ «___» ______ 20 թ.

______________________-ը ի դեմս ______________________-ի, որը գործում է______________________-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ________________-ը, ի դեմս տնօրեն ____________________-ի, որը գործում է ____________-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը:

Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _______________ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[10]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2:[11]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի ---ը:
Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[12]

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված365օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[13]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է

---

[10] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[11] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[12] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[13] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից:*

www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[14] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

---

[14] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[15]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:[16]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[17]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ

---

[15] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[16] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[17] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11.1 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը, իսկ գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում՝ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15[18]

---

[18] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհիգապապտիկը , ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Սույն կետի 5-րդ նախադասության մեջ սահմանվող ժամկետը չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից:*

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| --------------------------------- | --------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | ամբողջական անվանումը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| 1 | 30232130 | Լազերային գունավոր տպիչ | Գործառույթներ - տպում, պատճենում, սկանավորում<br>Տպագրության տեխնոլոգիա - ռեակտիվ<br>Տպման տեսակը - գունավոր<br>Տպագրության ձևաչափ - A4<br>Ինտերֆեյս - WiFi, USB 2.0<br>Տպիչ<br>Տպման արագություն A4 (սև/սպիտակ) - մինչև 10 էջ/րոպե<br>Տպման արագությունը A4 (գունավոր) - մինչև 5  էջ/րոպե<br>Առաջին էջի տպագրության տևողություն A4 (սև/սպիտակ) - 10 վ<br>Առաջին էջի տպագրության տևողություն A4 (գունավոր) - 16 վ<br>Տպման կետայնություն - 1440 x 5760 dpi<br>Ստանդարտ մուտքային քանակ - 100 թերթ<br>Ստանդարտ ելքային քանակ - 30 թերթ<br>Սկանավորում<br>Ստանդարտ սկանավորման կետայնություն  - 1200 x 2400 dpi<br>Սկանավորման առավելագույն չափ՝ ուղղահայաց - 297 մմ<br>Սկանավորման առավելագույն չափ՝ հորիզոնական - 216 մմ<br>Պատճենում<br>Պատճենման արագություն (A4) - 7 էջ/րոպե<br>Առավելագույն պատճենահանման ձևաչափ - A4<br>Մեկ ցիկլի համար պատճենման առավելագույն քանակ - 20 հատ<br>Առավելագույն կետայնություն - 600 x 600<br>Մատակարարումն իրականացնել վաճառողի կողմից՝ վաճառողի միջոցներով: |
| 2 | 31151120 | Անխափան սնուցման սարք | Անխափան սնուցման սարք APC SMV 2000VA SMV2000CAI կամ համարժեքը:<br>Հզորություն (VA/Watts) – 2000VA/1400W<br>Մուտքային հոսանք – 165-295 VAC ± 8 VAC |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Լարում – 220-240 VAC<br>Հաճախականություն – 50/60 Hz<br>Լիցքավորման ժամանակ – 4-6 ժամ<br>Ելքային միացման տեսակը – IEC 320 C13<br>Քաշ – 23.5 կգ<br>Չափեր – 45.5 x 18 x 24 սմ<br>Երաշխիք – 12 ամիս<br>Մատակարարումն իրականացնել վաճառողի կողմից՝ վաճառողի միջոցներով: |
| 3 | 30211280 | Համակարգիչ | Համակարգիչ ՝ նախատեսված տնային և գրասենյակային օգտագործման համար:Այն աշխատում է Intel Core i3-1315U պրոցեսորով, որը ապահովում է կայուն և էներգախնայող աշխատանք առօրյա առաջադրանքների համար: 16GB RAM և 512GB SSD կոնֆիգուրացիան տալիս են արագ համակարգային արձագանք և բավարար պահեստային տարածք: 23.8 դյույմանոց Full HD էկրանը ապահովում է հարմարավետ դիտում և կոմպակտ, մինիմալ դիզայն՝ առանց առանձին համակարգային բլոկի: Կադրերի հաճախություն (Հերց)100 Հց Էկրանի կետայնություն 1920x1080 Պրոցեսորի տեսակը Intel® Core™ i3 Ձայնային հզորություն 3Վտ x 2 Բլյութութ 5.2 USB մուտք USB 3.2[1],USB 2.0[2],USB-C 3.2[1] Մուտքեր HDMI IN[1],HDMI OUT[1],Mini Jack[1]: : Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: տեղադրել նաև windows 10 Մատակարարումն իրականացնել վաճառողի կողմից՝ վաճառողի միջոցներով: |
| 4 | 30211200 | Դյուրակիր համակարգիչ | Դյուրակիր համակարգիչը ներառում է պրոցեսորը (CPU), օպերատիվ հիշողությունը (RAM), կոշտ սկավառակը (SSD/HDD), տեսաքարտը (GPU) և էկրանի որակը: Պրոցեսոր(CPU)-ը նվազագույնը՝ Intel Core i5-ից ոչ պակաս քան 12-րդ սերունդ, Օպերատիվ հիշողություն(RAM) ոչ պակաս քան 16GB, Պահեստավորում (Storage) ոչ պակաս քան 5126GB, կոշտ սկավառակը ոչ պակաս քան 1TB SSD (արագ աշխատանքի և տարրողության համար): Էկրան: Full HD (1920x1080) կամ 4K, IPS մատրիցայով: Էկրանի չափս (դյույմ)17.3 Տեսաքարտ (GPU): Ինտեգրված (օֆիսային), նվազագույնը 512 GB: Այլ առանձնահատկություններ վեբ տեսախցիկ նվազագույնը՝ 720 p HD Camera, առնվազն 3 USB պորտ, մարտկոցի աշխատանքը նվազագույնը 8 ժամ: Մկնիկ hp ֆիրմայի կամ համարժեքը ամարվող Dell , Logitech ֆիրմաների: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: տեղադրել նաև windows 10: Առաքումը և մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով: |
| 5 | 32351120 | Համակարգչի էկրան (մոնիտոր) | Համակարգչի էկրան (մոնիտոր) PW27DQI-60Hz կամ համարժեքը<br>27" IPS վահանակ՝ 2560x1440 QHD լուծաչափով<br>● 60Hz/100Hz բարձր թարմացման հաճախականություն՝ ըստ ցանկության:<br>● USB-C-ն ապահովում է 65 Վտ հզորություն ձեր հեռախոսի կամ նոութբուքի համար:<br>● 4 կողմանի անշրջանակ դիզայնը ապահովում է ավելի լավ տեսողական փորձառություն:<br>● Բարձրությունը կարգավորվող հենակն ավելի էրգոնոմիկ է:<br>● HDMI 2.0+DP 1.2+USB-C 3.1 տեխնոլոգիա<br>Էկրանի չափը 27 դյույմ<br>Հետին լուսավորության տեսակը LED<br>Ասպեկտի հարաբերակցություն 16:9<br>Պայծառություն (առավելագույն) 350 կդ/մ²<br>Կոնտրաստի հարաբերակցություն (առավելագույն) 1000:1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Լուծաչափ 2560X1440@60Hz<br>Արձագանքման ժամանակը (առավելագույնը) 4 մվ (արտաքին շեղումով)<br>Գունային գամմա DCI-P3-ի 90%-ը (տիպ)<br>Դիտման անկյուն (հորիզոնական/ուղղահայաց) 178⁰/178⁰ (CR>10) IPS Գույների աջակցություն 16.7 ՄԲ (8 բիթ)<br>Մուտքային ազդանշան Տեսաազդանշան Թվային<br>Սինխրոնիզացված ազդանշան Առանձին H/V, կոմպոզիտային, SOG<br>Միակցիչներ HDMI 2.0 *1 ԴՊ 1.2 *1 USB-C (3.1 սերունդ) *1<br>Հզորություն էլեկտրաէներգիայի սպառում (առանց էլեկտրաէներգիայի մատակարարման) Տիպիկ 40 Վտ, Էլեկտրաէներգիայի սպառում (էլեկտրամատակարարմամբ) Տիպիկ 100 Վտ<br>Սպասման ռեժիմի սնուցում (DPMS) <1WՏեսակ AC 100-240V, 1.1A : Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումն իրականացնել վաճառողի կողմից՝ վաճառողի միջոցներով: |
| 6 | 39121100 | Գրասեղան | Գրասեղան 750x1400x850(ԲxԵxԼ) մմ: 60x20x2 մմ ուղղանկյուն մետաղական խողովակներով հիմնակմախքի գույնը՝ RAL 9010 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում): Սեղանածածկը 18 մմ հաստությամբ Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Մալուխների համար անցքերի մեջ՝ պլաստիկ դետալներով, մուգ մոխրագույն կամ սև: Դիմային ճակատից վերին և ստորին մասերում նախատեսված են մետաղական ճաղաշար՝ 10x10x2 քառակուսի խողովակներով և ներկված միաշերտ ցանց 2.5x5x1 մմ: Գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Առաքումը և տեղադրումը մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով:<br><br> |
| 7 | 39141140 | Քաշովի դարակներ | 3 քաշովի դարակներով մոդուլ 600x450x530(ԲxԼxԽ) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 4 հատ Siso 08.04.099 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին,  մատակարարի միջոցներով |
| 8 | 39141140 | Քաշովի դարակներ | 3 քաշովի դարակներով մոդուլ 600x530x450(ԲxLxԽ) մմ: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝սև համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 4 հատ Siso 08.04.099 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով |
| 9 | 39141140 | Քաշովի դարակներ | 2 քաշովի դարակներով մոդուլ ընդհանուր չափսերը՝ 700x450x530(ԲxԼxԽ) մմ քաշովի դարակները լինեն ներքևում, վերևում 3-րդ դարակը լինի բաց, բարձրությունը 350մմ՝ բաց: Աջ, ձախ, վերին ստորին արտաքին նիստերը 18 մմ հաստությամբ Egger W908 ST2 կամ Egger W1000 ST9 (այլընտրանք) լամինատով, իսկ դիմային և հետևի նիստերը Egger H3331 ST10 կամ Egger H3303 ST10 (այլընտրանք) լամինատով: վերին նիստը մոտ 10սմ բացվածքով : Սողնակները՝ բարձրորակ, անիվային մեխանիզմով, BLUM կամ տեխնիկապես համարժեք ապրանքանիշ: Դարակների բռնակները վերադիր, կլոր հատվածքով, սահուն, անվնաս էրգոնիմիկ անցումներով, կոդ՝ RQ104S.096BC99, Գույնը՝սև համաձայնեցնել պատվիրատուի հետ: Վերջնամշակումը՝ խոզանակած պողպատ: 4 հատ Siso 08.04.099 տեսակի անիվների վրա, որից 2 հատը արգելակով: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով |
| 10 | 39141120 | Պահարան | Պահարան դարակաշար, անկյունային պատին ամրացվող , չափսերը՝ 1500x450x600 ( ԲxԽxԼ)մմ ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ ФSU-ից, Աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ФSU-ի գույնի : Գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով: |
| 11 | 39714220 | Օդորակիչ | Դաս Ինվերտոր<br>Հիմնական ռեժիմները Տաքացում/Սառեցում<br>Հզորություն (BTU) 12000<br>Ապահովող մակերես(մ2) 31-40<br>Ապահովող մակերես բարձրությունը 3 - 3.5մ<br>Սառեցման հզորություն (կՎտ) 3.52<br>Ջերմային հզորություն (կՎտ) 3.66<br>Մին. ջերմ. ջեռուցման ռեժիմում (-15*C)<br>Ներքին բլոկի չափսերը ԲxԼxԽ (սմ) 25x78x20<br>Արտ. բլոկի չափ ԲxԼxԽ (սմ) 50x79x24<br>Ներքին/Արտաքին աղմուկը (դԲ) 40/49<br>Գազի տեսակ R32<br>Ապրանքանիշ Գերմանիա<br>Լարում (Վ) 220-240 Գույն Սպիտակ<br>Էներգախնայողության դաս A<br>Ներքին բլոկի քաշը (կգ) 7.5<br>Արտաքին բլոկի քաշը (կգ) 20<br>Էներգիայի սպառում (Սառեցում/Տաքացում) (կՎտ) 1/1<br>Միացման խողովակ (Գազ-Հեղուկ) (դյույմ) 3/8-1/4<br>Արգելի 11 փ. 3-րդ հասցեում օդորակիչը պետք է տեղադրել 2-րդ հարկում: Առաքումը և տեղադրումը մատակարարի հաշվին, մատակարարի միջոցներով: |

**    Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*«      »         20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| հատ | 100000 | 100000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| հատ | 240000 | 240000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| հատ | 300000 | 300000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| հատ | 250000 | 250000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| հատ | 80000 | 80000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| հատ | 95000 | 95000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցային օր |
| հատ | 75000 | 75000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցային օր |
| հատ | 75000 | 75000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցային օր |
| հատ | 75000 | 75000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցային օր |
| հատ | 120000 | 120000 | 1 | Ք.Նոր Հաճըն Տոռոզյան 7 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30 օրացուցային օր |
| հատ | 80000 | 160000 | 2 | Նոր Հաճըն համայնք,գ. Արգել, 11փ 3 | 1 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 20 օրացուցային օր |
| | | | | Նոր Հաճըն համայնք,գ. Ատամետ, 1փ 77շ., | 1 | |

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«          »               20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30232130 | Լազերային գունավոր տպիչ | …% | …% | …% | …% | …% | …% | …% | …% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 2 | 31151120 | Անխափան սնուցման սարք | …% | …% | …% | …% | …% | …% | …% | …% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 3 | 30211280 | Համակարգիչ | …% | …% | …% | …% | …% | …% | …% | …% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 30211200 | Դյուրակիր համակարգիչ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 5 | 32351120 | Համակարգչի էկրան (մոնիտոր) | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 6 | 39121100 | Գրասեղան | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 7 | 39141140 | Քաշովի դարակներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 8 | 39141140 | Քաշովի դարակներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 9 | 39141140 | Քաշովի դարակներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 39141120 | Պահարան | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 11 | 39714220 | Օդորակիչ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 100% | 100% | 100% | 100% | 100% |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| -------------------------------- | -------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 4*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
____________________________
____________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը __________________
հհ_____________________________
հվհհ_____________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «             »  20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
____________________________
ստորագրություն
____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
____________________________
ստորագրություն
____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ    N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

___________________________
ազգանուն, անուն

___________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

___________________________
ազգանուն, անուն

___________________________
ստորագրություն

*Հավելված N 5*
*«      »       20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ____________________-ի միջև «--»   20  թ. կնքված
գնորդի անվանումը   վաճառողի անվանումը

«--- ------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________-ի   միջև  «--»  20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.11.1 կետով սահմանված պահանջներին:

________________________________   ____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20  թ.

*Հավելված N 5*
*«       »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

3. ________________________-ի և __________________-ի միջև «--»   20 թ. կնքված
գնորդի անվանումը   վաճառողի անվանումը

«--- ------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________-ի   միջև «--»  20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

4. համաձայն է Պայմանագրի 8.11.1 կետով սահմանված պահանջներին:

______________________________________   ____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20 թ.

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

2. Հակադարձ աճուրդը կկայանա www.eauction.armeps.am էլեկտրոնային աճուրդով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով:

2.2 ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/43 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 2026 թվականի օգոստոսի 17-ին՝ ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սմբատյան

Հանձնաժողովի անդամ՝ Գոհարիկ Կարապետյան

Հանձնաժողովի անդամ՝ Նազիկ Մնացականյան

Գնումների համակարգող՝ Տաթևիկ Հովհաննիսյան